ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ԶԱՔԱՐԻԱ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄՈՒՂՆՈՒ Ս. ԳԵՒՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(30 սեպտեմբերի, 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն.

«Զբարւոք պատերազմ պատերազմեցա՛յ, զընթացսն կատարեցի՛ զհաւատսն պահեցի՛»
(Բ. Տիմ. Դ. 7)։

Սիրելի՛ ուխտավորներ,

Կարեւոր այս խոսքերով է Սբ. Պողոս առաքյալը դիմում իր աշակերտ Տիմոթեոսին՝ ամփոփելով կյանքի իմաստն ու նշանակությունը։ Նա ապրեց փորձություններով եւ մարտահրավերներով լի բազում օրեր, առաքելական քարոզչությամբ կարողացավ շատերին դարձի բերել՝ միշտ հավատարիմ մնալով հավատքի զորագլուխ Հիսուս Քրիստոսին ու Նրա սիրո վարդապետությանը։ Անհնար է պատկերացնել քրիստոնեությունն առանց այս առաքյալի սխրանքի եւ համառ ջանքերի։ Ուստի պատահական չէ, որ նրան իրավամբ անվանում են «քրիստոնեության հիմնադիր», քանզի տարաբնույթ նամակներով եւ ուսմունքով ճարտարապետեց, կանխորոշեց Քրիստոսի Եկեղեցու լուսավոր ապագան։ «Հեթանոսաց առաքյալը» նաեւ հրաշալի օրինակ է քրիստոնյաներիս համար, թե ինչպե՛ս կարող է Աստծու ողորմությամբ Եկեղեցին հալածողը՝ օրինապահ փարիսեցին, հետագայում վերափոխվել նույն Եկեղեցու ամենաջերմեռանդ պաշտպանի՝ մեզ համար դառնալով ներշնչանքի եւ ընդօրինակման աղբյուր։ Կյանքի այս նույն փիլիսոփայությամբ ու Տիրոջ հանդեպ անպայմանավոր հավատարմությամբ ապրեցին, գործեցին երանելի սրբերն ու սրբակենցաղ հայրերը՝ չուրանալով Հիսուսին, իսկ շատերն էլ իրենց կյանքն ավարտեցին նահատակությամբ։

Քրիստոսի Եկեղեցու անհաղթ բանակից էր նաեւ համաքրիստոնեական եւ մեր ազգի ամենասիրելի սրբերից մեկը՝ Սբ. Գեւորգ զորավարը, որի հիշատակության օրն է այսօր։ Եւ կրկին ուխտավոր ենք ամենքս Մուղնու այս աղոթաբույր եկեղեցում, որտեղ ամփոփված են սրբի մասունքները։ Ավանդության համաձայն՝ Սբ. Գեւորգի նշխարները Հայաստան է բերել Սբ. Ներսես Մեծ հայրապետը եւ ամփոփել Հովհանավանքում, որտեղից էլ հետագայում դրանք տեղափոխվել են Մուղնի։ Այս ուխտատեղիում միջնադարում գրվել են ձեռագիր բազում մատյաններ, պահվել արժեքավոր սրբություններ։ Այստեղ երբեք չի դադարել հայի աղոթքը։ Սբ. Գեւորգի ամեն քարը մեր հայրերի անկեղծ աղոթքով է ներշնչված, որ մեզ հիշեցնում է Հայոց աշխարհի փառավոր անցյալի, Հայոց Եկեղեցու հանդեպ հայ քրիստոնյայի հավատարմության եւ սիրո մասին։

Անկասկած, այսօր եկել ենք հրաշագործ Սբ. Գեւորգի բարեխոսությունը հայցելու Տիրոջ մոտ մեր ընտանիքների, հայոց ազգի, Հայրենիքի եւ հատկապես արցախցի մեր եղբայրների ու քույրերի համար, որոնք այս օրերին հերոսաբար կրկին Գողգոթայի ճանապարհն են անցնում։ Այո՛, մեր սրտերն ու հոգիները փոթորկված են, միտքը՝ երբեմն ցրված, կյանքը՝ իմաստազրկված, ապագան՝ մշուշոտ, որովհետեւ ապրում ենք ծանր ժամանակներում եւ ականատեսն ենք մեր պատմության ամենաողբերգական էջերից մեկին։ Զորս կողմից մեզ ներշնչում են, որ անդառնալիորեն պարտված ենք, անօգնական ու անզոր ինչ-որ բան փոխելու, շտկելու համար։ Տեղեկատվական բացասական չընդհատվող լրահոսը, կեղծ լուրերը շարունակում են տկարացնել ու վախի մեջ պահել մեզ, կորցրել ենք իրականությունը հասկանալու եւ վերլուծելու զգացողությունը։ Մեր հայրենակիցներից ոմանք էլ ապրում են անտարբեր ու անհոգ կյանքով, ասես այս ամենը մեզ հետ չի կատարվում՝ վերհիշեցնելով Հայոց ցեղասպանության ժամանակ շատերի պահվածքը... Մի պահ կա՛նգ առեք, սիրելի՛ մարդիկ, մի՛ տրվեք թշնամիների սադրանքներին, հավատացե՛ք ձեր ուժերին, փորձե՛ք քրիստոնեաբար մտածել ու շարժվել։

Հավատացեք՝ այս վիճակն անելանելի կմնա, եթե չսթափվենք, չմիաբանվենք, նախորդ դարի մեր պատմությունից դասեր չքաղենք, գոնե հիմա մեր անձնական ցանկություններն ու նկրտումները մի կողմ դնենք հանուն Հայրենիքի եւ հայոց պետականության։ Սա վերաբերում է անխ-

տիր բոլորին եւ հատկապես նրանց, ովքեր պատասխանատվություն եւ պարտականություն ունեն մեր օրերում՝ ժողովրդին առաջնորդելու եւ այս մղձավանջից դուրս բերելու համար։ Պատմության անողոք դատաստանն ու գալիք սերունդները մեզ չեն ներելու մեր անտարբերության եւ անգործության համար։ Նայե՛ք Սբ. Գեւորգի կյանքին եւ ոգեշնչվեք, որ անգամ անասելի տանջանքների ժամանակ եւ խաչի ճանապարհին չվհատվեց, արիացավ, չուրացավ Աստծուն, այլ Նրա հանդեպ իր հավատարմությամբ ու հավատքով հաղթանակ տարավ։ Որքան էլ դժվար է հիմա, բայց պետք է հավատալ ե՛ւ մեր անձնական, ե՛ւ համընդհանուր հաղթանակներին ու համապատասխանաբար գործել։

Այս խառնիճաղանջ եւ անբարենպաստ ժամանակներում ամենքս մեր սխալներն ու մեղքերը գիտակցելու, սրտանց զղջալու, դեպի Տերը դառնալու եւ քաջալերության կարիք ունենք, որպեսզի հույսը հաղթի անհուսությանը, իսկ կյանքը՝ մահվանը։ Նույն այս մտածումով եւ գիտակցությամբ բանտարկված Սբ. Պողոս առաքյալը, զգալով իր մոտալուտ մահը, մեծ առաքելությունից առաջ քաջալերում էր Տիմոթեոսին եւ հորդորում ոչ մի դեպքում չվհատվել ու չծնկել դժվարությունների առաջ, այլ անսասան հավատքով ու Տիրոջ օգնականությամբ դրանք հաղթահարել՝ սպասելով արդարության պսակին եւ Տիրոջ հայտնությանը։ Սբ. Պողոս Տարսոնացին իր կյանքն ապրել էր Տիրոջով իմաստավորված եւ անվարան կարող էր արդեն կյանքի մայրամուտին ազդարարել, որ բարի պատերազմ է մղել եւ հաղթել։ Նա ասես նման է այն մարզիկին, որ ամեն ջանք գործադրում է, նեղություններն ու դժվարությունները հաղթահարում ապագա հաղթանակի համար։ Հետաքրքիր է, որ Նոր Կտակարանի այս համարում պատերազմ *բառի համար գործածվում է հունարեն «ագոն» գոյականը, որ թարգմանվում է* պայքար, սխրանք*։ Հին հույները եւ հռոմեացիներն այս բառով էին նաեւ նկարագրում կրոնական կամ քաղաքական տոների ժամանակ ավազով լցված հրապարակներում կատարվող կրկեսամարտիկների (*gladiator*) մրցամարտերը։ Այլ խոսքով՝ առաքյալն ուզում է ասել, որ իրեն բաժին հասած մարտը, պատերազմը հաջողությամբ է ավարտել, ամեն ինչ արել է քրիստոնեության հաղթանակի ու տարածման համար։ Ուստի ժամանակն է Տիրոջ մոտ գնալու եւ Նրա ներկայության մեջ ապրելու համար։*

Սիրելինե՛ր, սուրբգրային այս տեղին մեր աչքի առաջ ուրվագծում է քրիստոնյայի եւ մարզիկի պատկերը։ Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր

մարզիկ ամեն ջանք գործադրում է պատշաճ մարզավիճակում լինելու համար՝ հետեւում է սննդակարգին, պարբերաբար մարզվում, ժամանակին քնում, հեռու մնում վատ սովորություններից եւ մոլություններից, ուշադրությամբ լսում է մարզչի խորհուրդները՝ դրանք անվերապահ կատարելով։ Նա բոլոր զրկանքները համբերատարությամբ եւ անտրտունջ տանում է, քանզի մեծ է հաղթանակ տանելու ցանկությունը։ Նույնն է իրականում քրիստոնյաներիս կյանքը, որի գլխավոր նպատակը մեկն է՝ մեր փրկությունը։ Բայց ի տարբերություն որեւէ մարզիկի՝ մենք նաեւ մեր հոգին պետք է մարզենք, կրթենք՝ աղոթքով, պահեցողությամբ, Սբ. Գրքի ընթերցանությամբ, Եկեղեցու հայրերի գրվածքները սերտելով ու նրանց խորհուրդներին անսալով, որպեսզի մշտապես հոգեւոր լավ մարզավիճակում լինենք։ Մեր կյանքում էլ քիչ չեն անկումներն ու վերելքները, դժվարություններն ու մարտահրավերները, որոնք կարող ենք հաղթահարել՝ Տիրոջն ապավինելով եւ Սբ. Ավետարանի ոգուն հարազատ կյանք ապրելով։ Ինչպես մարզիկի համար է կարեւոր լավ, պատրաստված մարզիչ ունենալը, այնպես էլ քրիստոնյայի համար՝ իմաստուն, փորձառու եւ սիրող հոգեւոր հայր, որ կօգնի նրան փրկագործության ճանապարհին։ Այսպիսին էր հենց Սբ. Պողոսն իր սիրասուն աշակերտի համար, որին այնքան շատ սիրում էր, խրատում եւ հանդիմանում։

Սբ. Պողոս առաքյալն ուրախությամբ հայտարարում է նաեւ իր կյանքի ընթացքն ավարտելու մասին, որովհետեւ անսահման վստահություն եւ աներեր հավատք ունի Փրկչի հանդեպ։ Նա վայրկյան առաջ ուզում է ազատվել ֆիզիկական մարմնից ու Տիրոջ հետ միավորվել։ Եկեք խոստովանենք, որ այսպես համարձակ կարող է արտահայտվել միայն այն մարդը, որ բովանդակալից եւ նպատակասլաց կյանք է ապրել, աներկբա հավատում է հավիտենական կյանքին, քանզի Քրիստոսի հարությամբ մահն այլեւս իշխանություն չունի նրա վրա։ Ժողովրդական խոսքն ասում է. «Մարդուս վերջը բարի լինի»։ Երբեմն մարդ ապրում է արժանավայել, մաքուր կյանքով, վայելում մարդկանց հարգանքն ու սերը, սակայն կյանքի վերջում իր արարքով կամ գործողություններով ամեն ինչ ջուրն է լցնում։ Բայց սուրբ առաքյալի համար այդ վերջն սկիզբն է հավիտենականության մեջ, որի համար նա պայքարել է այս կյանքում՝ հստակ քայլերով իր առջեւ դրած նպատակին հասնելով։ Այստեղ մեկ օրինակ եմ ուզում բերել համաշխարհային պատմությունից։

Ք. ա. 490 թ. Մարաթոնի ճակատամարտը մեծ դերակատարություն է ունեցել մարդկության պատմության մեջ, որից եւ առաջացել է ամենքիս քաջ հայտնի Մարաթոնյան վազքը։ Ըստ պատմահայր Հերոդոտոսի՝ հույները ու պարսիկները կատաղի պայքարում էին միմյանց դեմ։ Չնայած պարսիկների թվային գերակշռությանը, այնուամենայնիվ, հույներին հաջողվեց կոտրել պարսիկների դիմադրությունը եւ հաղթանակ տանել։ Եւ ահա ավանդությունն ասում է, որ Ֆիդիպիդես անունով հույն զինվորը, առանց կանգ առնելու, օր ու գիշեր տասնյակ մղոններ վազելով, հասնում է Աթենք՝ հաղթանակի ուրախ լուրը հայտնելու համար։ Երբ շնչակտուր բարձրանում է լեռան վրա եւ ավետիս տալիս աթենացիներին, նույն պահին մահանում է։ Այս զինվորն առաքյալի նման վազեց, չխնայեց իրեն, բազում ասպարեզներ անցավ, բայց հասավ իր նպատակին։ Սա է երջանիկ մահը, երբ հասել ես նպատակիդ։ Ուրեմն, սիրելի՛ ներկաներ եւ հատկապես երիտասարդներ, նպատակներ ունեցեք եւ հասեք դրանց, որոնք ծառայում են մարդու հոգեւոր զորացմանը, հայրենաշինությանը եւ մարդասիրությանը։

Ինչպես տեսնում ենք, առաքյալն իր պատգամի վերջում համոզված նշում է, որ չնայած բոլոր դժվարություններին ու երկրային փոթորիկներին, կարողացել է պահել հավատքը։ Սա շատ կարեւոր արձանագրում է, որ մեզ մտածելու տեղիք պետք է տա։ Մարդիկ սովորաբար հպարտանում եւ ուրախանում են այլ բաների վրա, որ կարողացել են դրամական հաջողությունների հասնել, տուն կառուցել, թանկարժեք մեքենա ունենալ, տարին մի քանի անգամ արտերկիր հանգստի մեկնել եւ այլն։ Բայց այս առաքյալը հպարտանում է Տիրոջով եւ հավատքը պահելու շնորհով։ Ուրեմն որքա՜ն կարեւոր է ոչ միայն նմանօրինակ հավատք ունենալը, այլեւ այն պահպանելն ու գործնական կյանքում կիրառելը։ Առանց հավատքի դժվար է ապրել, քանզի այն ուժ է, գալիքի հանդեպ հույս եւ լավատեսության հիմք։ Մեր կյանքի այս անորոշության հորձանուտում կարեւորն այն է, որ չկորցնենք մեր հավատքը Տիրոջ, սեփական ուժերի, ապագա հաղթանակների հանդեպ։ Մեզ օդի ու ջրի նման անհրաժեշտ է միասնական ու հայրենատեր լինել, մեզանից վանել ատելությունն ու թշնամանքը միմյանց հանդեպ, սիրել ու ձեռք մեկնել իրար, ուրախանալ մեկս մյուսի հաջողություններով ու ձեռքբերումներով՝ պահպանելով ազգային-քրիստոնեական ինքնությունն ու նկարագիրը։

Թող բոլորիդ ուխտն ընդունելի լինի Աստծու մոտ, եւ խնդրանքներն անտարակույս կատարվեն, չմոռանաք ձեր աղոթքներում անպայման հիշել հայոց բանակի մեր զինվորներին, հրամանատարներին, կարիքավորներին, հիվանդներին եւ նեղության մեջ գտնվողներին։

Միշտ սրտանց աղոթեք նաեւ հայոց պետականության անսասանության եւ Հայոց Եկեղեցու զորացման համար՝ հավատալով մեր նոր հաղթանակներին։

Զորացե՛ք Տիրոջով, գործե՛ք հավատքով եւ ապրե՛ք սիրով։